

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հաշվի առնելով, որ Վարչապետի աշխատակազմը հաճախ հանդիպում է քաղաքացիների կողմից իրենց դիմումների անպատասխան մնալու վերաբերյալ դժգոհություններ, տեղեկացնում ենք՝ որևէ քաղաքացու դիմում չի մնում առանց ուսումնասիրության, պատասխանի և համապատասխան ընթացքի ապահովման:

Դժգոհություններն ունեն հետևյալ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները.

1. Քաղաքացին ստացել է գրավոր պատասխան (պարզաբանում), սակայն իր կողմից բարձրացված խնդիրը չի լուծվել և հայտարարում է, որ պատասխան չի ստացել (հիմնականում նման դիմումներում խնդրում են վարչապետի միջամտությունը դատական գործընթացին կամ բանկային ու վարկային կազմակերպություններից վերցված վարկերն ու հաշվարկված տոկոսները զիջելուն և այլն):
2. Քաղաքացուն առաքվել է գրավոր պատասխան, սակայն «Հայփոստ» ծառայության կողմից ինչ-ինչ պատճառով այն չի հանձնվել հասցեատիրոջը: Նման դեպքեր ի հայտ գալու պարագայում մեր կողմից հնարավոր միջոցներով (եթե առկա է հեռախոսակապ, էլ. փոստի հասցե) քաղաքացուն տրամադրում ենք իր դիմումի պատասխանը:
3. Քաղաքացին իր դիմումում, բացի անուն-ազգանունից, այլ տվյալ չի նշել (հասցե, հեռախոսահամար և այլն), ինչը հնարավորություն չի տալիս նույնականացնել դիմողին:
4. Քաղաքացիները դիմել են ոչ թե ՀՀ վարչապետին, այլ դիմում են այլ մարմնին:
5. Դիմումում առկա են անվայելուչ արտահայտություններ և հայիոյանքներ, որոնց ընթացք չեն տրվում:

Հարգելի քաղաքացի, եթե Դուք դիմում եք գրել վարչապետին և պատասխան չեք ստացել, խնդրում ենք զանգահարել կառավարության թեժ գիծ՝ **1-17** անվճար հեռախոսահամարին:

2019թ. հունվարի 1-ից մայիսի 1-ը ՀՀ վարչապետի աշխատակազմ ստացված քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, բողոքների թվաքանակի և դրանց բնույթի մասին

2019թ. հունվարի 1-ից մայիսի 1-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ վարչապետի աշխատակազմ ստացվել է 7.585 դիմում, որը 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4.5 անգամ:

Ստորև ներկայացնում ենք նշված ժամկետում ստացված դիմումների քանակն ըստ բնույթի:

Հարցի բնույթ	2019 հունվար- մայիս	%
Աշխատանքային	499	6.6%
Առողջապահություն	313	4.1%
Արդարադատություն	551	7.3%
Արտաքին գործեր	33	0.4%
Բնապահպանական	31	0.4%
Գյուղատնտեսական	115	1.5%
Ընդհանուր բնույթի հարցեր	1534	20.2%
Ընդունելություն	178	2.3%
Իրավական հարցեր	807	10.6%
Կադաստր	42	0.6%
Կրթություն և գիտություն	149	2.0%
Հարկային և մաքսային	126	1.7%
Մշակութային	60	0.8%
Պաշտպանություն	266	3.5%
Ջրամատակարարում և ջրահեռացում	46	0.6%
Սոցիալական	1817	24.0%
Սպորտային	12	0.2%
Սփյուռք	10	0.1%
Վարկեր և ֆինանսներ	620	8.2%
Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում	161	2.1%
Տնտեսություն և էկոնոմիկա	4	0.1%
Տրանսպորտ, կապ, ճանապարհաշինություն	49	0.6%
Քաղաքաշինություն	162	2.1%
Ընդամենը	7585	

2019թ. հունվարի 1-ից մայիսի 1-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ վարչապետի աշխատակազմի թեժ գծով ստացվել է 29.814 հեռախոսազանգ, որը 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4 անգամ:

Ստորև ներկայացվում ենք նշված ժամկետում թեժ գծով ստացված զանգերի քանակն ըստ բնույթի:

Հարցի բնույթ	2019 հունվար- մայիս	%
Առողջապահություն	2940	0.10%
Արտաքին գործեր	452	1.52%
Բնապահպանական	260	0.87%
Գյուղատնտեսական	730	2.45%
Ընդհանուր բնույթի հարցեր	1795	6.02%
Իրավական հարցեր	3405	11.42%
Կադաստր	676	2.27%
Կրթություն և գիտություն	1378	4.62%
Հարկային և մաքսային	3266	10.95%
Պաշտպանություն	1466	4.92%
Ջրամատակարարում և ջրահեռացում	1279	4.29%
Սոցիալական	7737	25.95%
Սփյուռք	646	2.17%
Վարկեր և ֆինանսներ	1538	5.16%
Տնտեսություն և էկոնոմիկա	816	2.74%
Տրանսպորտ, կապ, ճանապարհաշինություն	934	3.13%
Քաղաքաշինություն	496	1.66%
Ընդամենը	29814	